



ՎԱՐԴ ԲԴՈՅԱՆ

ԳԱԼԵՐԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱԳՐԱԳԵՏ

(Մենդյան 105-ամյակի առթիվ)



տար պատմիչները դեռևս մեր էրայից առաջ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում հայ ժողովրդի կյանքի, նրա կենցաղի ու սոցիալական հարաբերությունների մասին: Այդ տեղեկատից արժանի է հիշատակել հույն պատմիչներից Ստրաբոնին, Հերոդոտին և Քսենոֆոնին. իսկ հռոմեական պատմիչներից՝ Պլինիոսին:

Հայ մատենագիրները հոնեց պահանջներին մեզ նույնպես մեծ ժողովրդի սովորությունների և ընդհանրապես ազգագրությանը շահագրգռող նյութերի մասին ոչ ոչ տեղեկություններ են հաղորդում, սակայն որպես հենց հայ պատմիչներ, սրտիցից մենք ավելի մեծ ակնկալություններ ունենք, նրանք ազգագրության մասին բավարար գործեր չեն թողել: Նրանցից շատերն ուղղակի անցել են իրենց մոլորությանը նիստ ու կացի, առնտին կյանքի ու հարաբերությունների կողքից, չեն տեսնում միայն իրենց ժամանակների և կամ նախորդող էպոխաների թագավորների ու զարավարների մաքառման պատմությունն օտար նվաճողների դեմ: Եվ եթե կան մեզ հետաքրքրող ազգագրական նյութեր էլ. ապա նրանք զրգամ են պատահական բնույթի և ամփոփված չեն գրական որևէ ամբողջական աշխատանքի մեջ:

Որոշակի և լրիվ գաղափար կազմել հայ հեթանոսական շրջանի, ինչպես և քրիստոնեության մուտքից հետո մինչև ուշ միջնադարյան շրջանի հայ ժողովրդական սովորությունների մասին, անկարելի է: Չնայած դրան, այնուամենայնիվ մեր պատմիչները բավականաչափ նյութ են մատակարարում հայ ժողովրդի հնագույն ժամանակների հավատալիքների մասին:

Այս իմաստով խիստ արժեքավոր է Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց»-ը, որ հանդիսանում է քրիստոնեության փառաբան-

ման և հեթանոսական կրոնների քննադատության մեծ լավագույն աղբյուրներից մեկը: Պակաս նշանակալից չէ նաև Ագաթանգեղոսի գործը:

Ազգագրական ալլևալլ նյութեր հաղորդելու տեսակետից նշանավոր են նաև Փավստոս Բյուզանդի, Ղազար Փարպեցու, Թովմա Արծրունու, Մովսես Կաղանկատվացու, Մխիթար Գոշի և այլոց գործերը:

Որքան էլ ցար ու ցոփվ լինեն նրանց թողած ալլևալլ նյութերը, այնուամենայնիվ դրանք նշանակություն ունեն հայոց հնագույն պատմությունն ու նախնական կուլտուրան արժեքավորելու համար: Զիշտ անպես, ինչպես Եզնիկական ժողովուրդների կուլտուրայի պատմության համար նրանց թողած սովորություններն ու ավանդությունները, որոնք գրված են աղյուսների և հույկապ կոթողների վրա:

Ազգագրական հատ ու կենտ նյութեր կարելի է գտնել ոչ միայն մեր հին ու նոր պատմիչների երկերում, այլև մեր գրիչների կողմից գրված բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններում, որոնք կարոտ են ուսումնասիրման: Երկար ժամանակ՝ մինչև 18-րդ դարը ազգագրությունը հայ պատմիչների համար գիտական — պատմական արժեք չէր ներկայացնում և հատուկ ուշադրության առարկա չէր: 18-րդ դարի վերջերին, հայ գրականության զարգացման էտապում, մեր գրողների երկերում հանդես է գալիս նաև ազգագրությունը, որը սակայն, շատ հեռու էր ազգագրության գիտական պահանջները բավարարելուց: Այս երկերում շոշափվում էին հայ ժողովրդի կենցաղի պատահական մոմենտները կամ հայրենասիրությունը գրգռող ազգային անցյալը: 19-րդ դարի առաջին կեսի մի շարք հայ հեղինակներ իրենց երկերում, գովաբանելով հայ ժողովրդի հեթանոսական անցյա-

լը, գուգընթացաբար տեղ էին տալիս նաև մեր ժողովրդի կենցաղին ու նրա սովորություններին: Դրանց մեջ աչքի են ընկնում Մ. Թադևոսյանն ու Խ. Աբովյանը, որոնք ունեցան իրենց հետևողները:

Մեսրոպ Թադևոսյանն իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ (1806—1819), ինչպես և մյուս տպագիր ու անտպագիր գործերում, նկարագրեց հայ գուգուցու կենցաղի մի շարք մոմենտները: Նա պակաս հետաքրքրություն հանդես չբերեց նաև ֆուկլորի նկատմամբ, որի բազմաթիվ պատմություններով համեմտում էր իր ստեղծագործությունները:

Հայ ազգագրության էվոլուցիայի տեսակետից Խ. Աբովյանի «Վեղը Հայաստանի»-ն, որը հետապնդում էր ազգային ինքնաճանաչման իդեանների սերմանումը, մի քայլ առաջ էր: Նրա մեջ ազգագրական նյութերը խիստ տարբերվում էին նախորդ հեղինակների թողած նյութերից թե՛ քանակի և թե՛ որակի տեսակետից:

Աբովյանի ազգագրությամբ Պ. Պոռշյանը գրեց «Սոս և Վարդիթեր» կենցաղային վեպը: Այս երկի առաջաբանից երևում է, որ հեղինակն նպատակ էր վեպի միջոցով ներկայացնել հայրենի գյուղի ժողովրդի սովորություններն ու կրոնական ծեսերը: Պոռշյանի հաջորդ բոլոր գործերի մեջ էլ ազգագրական մատերիալը ուղադրվում տեղ է գրավում:

Էլ չենք խոսում թե՛ Աբովյանի և թե՛ Պոռշյանի կողմից հայ ֆուկլորն արժեքավորելու և այն գրի առնելու փաստերի մասին, որ ինքնին վկայում է նրանց դեպի ժողովրդի ազգային սովորություններն ու ավանդություններն ունեցած սիրտ մասին:

Մնացած հեղինակների մոտ հայ ազգագրությունը կամ շատ աննշան չափով տեղ գտավ և կամ գեղարվեստական գրականության հետ սերտ առնչություն չունենալով դուրս վանվեց նրա շրջանակներից:

Ազգագրությամբ զբաղվող հեղինակների հետ միասին խոշոր ու շնորհակալ աշխատանք էր ծավալում նաև հայ պարբերական մամուլը: «Արշալոյս Արարատեան»-ը, «Բազմավեպ»-ը, «Հայաստան»-ը, «Ներսիս»-ը, «Մասիս»-ը, «Մասեաց Աղանի»-ն և այլն իրենց էջերում բավական տեղ էին հատկացնում գավառներից ստացված բազմապիսի հոդվածներին, այդ հոդվածների մեջ պատահականորեն գրվում էին ժողովրդի բարքերի, սովորությունների, հավատալիքների, նույնիսկ բարբառների մասին:

Այդ հոդվածագիրների համար ազգագրությունը նպատակ չի հանդիսացել:

Հայ ազգագրական նյութերը պատահա-

կանորեն գրի են առել նաև օտարազգիները, որոնք ճանապարհորդել են Հայաստանում ինչպես՝ Հաբստհաուզներ, Բոդենշտեդտը, Վագները և ուրիշները:

Հայ իրականության մեջ այսպիսով մենք չենք ունեցել ազգագրությամբ հատկապես զբաղվող մարդիկ, որոնք շրջին գավառները, լսեին ժողովրդին և գրի առնեին նրա սովորությունները, առասպելները և այլն:

Այսպիսով մինչև 19-րդ դարի 50—60-ական թվականները հայ ազգագրությունը կրել է պատահական բնույթ: Սա մեր ազգագրության զարգացման առաջին փուլն էր:

Հայ ազգագրության, հայկական ֆուկլորի զարգացման երկրորդ փուլը կապված է մեծ ազգագրագետ և բանահավաք Գարեգին Սրվանձտյանի անվան հետ, որը կրթություն ստանալով Ֆրանսիայում, ապա Վարսզում՝ Խոխմյանի հիմնածալրոցում, ամբողջովին նվիրվեց հույ ժողովրդին և մինչև իր կյանքի վախճանը ծառայեց նրան:

Մեր ազգագրության սկիզբը, որ դրեց Սրվանձտյանը, պետք է համարել անցյալ դարի 70-ական թվականները:

Ինչպես կենսագրությունից հայտնի է, Գ. Սրվանձտյանը 1860-ին Խրիմյանի հետ ճանապարհորդել է գրեթե ամբողջ Արևելահայաստանի գլխավոր կենտրոններն ու վայրերը և մի տարի տևող այդ ուղևորության ընթացքում ահագին տպավորություններ է ստացել: Վերադարձից հետո նա իր այդ տպավորությունները տպագրել է «Արձույն Վասպուրական» ամսաթերթում, որի լույս տեսնելուց հետո, ապա խմբագրի պաշտոնն ունենալու պատիվն է ունեցել:

Երևան, Թիֆլիս և Շուշի քաղաքների նրկարագրության մեջ մենք այսօր ազգագրական թանկագին նյութեր ենք գտնում 60-ական թվականների հայ, պարսիկ, ռուս և այլ ժողովուրդների կյանքից վերցված: Կարևոր է հիշատակել, օրինակ, կրոնական ծեսերի, Թիֆլիսի հայ համբարությունների օրենքների, պատանեկական խելահեղ խաղերի, արհեստների, վաճառականության, տների կառուցվածքի մասին արված նկարագիրները և այլն:

Սակայն, որքան էլ դրանք կարևոր էին, այնուամենայնիվ, Սրվանձտյանի համար հանդիսանում էին ոչ թե նպատակ, այլ պարզապես մի փորձաքար, որոնք ուղի հարթեցին նրա «Բրոց ու Բրոց»-ի և հետագա մյուս աշխատանքների համար:

«Բրոց ու Բրոց»-ը լույս տեսավ 1871-ին Կ. Պոլսում: Սրա առաջին մասը բովանդակում էր հայ ազգագրության հավաքման

ծրագիրն ու նրա հետ համաձուլյ անսպառ նյութերն ազգագրությունից և ֆուկլորից: Գրքի երկրորդ մասում հեղինակը տեղավորել էր «Մասունցի Դավթի» առաջին պատումը:

Որպես ազգագրության հավաքման ծրագիր կամ հարցարան, «Գրոց ու Բրոց»-ը առաջին խիզախ փորձն էր հայ բանասիրության մեջ և որպես առաջինը զերծ չէր անխուսափելի թերություններից. Այստեղ առաջադրված հարցերը շարվապավում էին բոլորող պատասխանների հետ այնպես, որ դրվար է զանազանել հեղինակի մտքերը: Այնուամենայնիվ, «Գրոց ու Բրոց»-ը թե՛ որպես ծրագիր, և թե՛ որպես ազգագրական ու ֆուկլորային նյութերի ժողովածու միանգամայն նորություն էր: Բավական է հիշատակել, որ նա լույս տեսավ և հրաձգվեց թե հայ և թե օտար բանասիրությանը: Այդ դործի նշանակությունը մեզ համար կրկնակի կլինի, եթե պատկերացնենք այն խոշոր դրական վարակիչ ազդեցությունը, որ «Գրոց ու Բրոց»-ը ունեցավ էպոսի հաջորդ վարիանտների գրառման գործի վրա:

Գ. Սրվանձտյանը այս դրքով էր, որ հայ գիտական ազգագրության հիմքը դրեց և իր հետագա աշխատություններով զարգացման նոր աստիճանի վրա բարձրացրեց այն: «Գրոց ու Բրոց»-ը ազգագրական տեսակետից ունեցավ բազմաթիվ հետևողներ, որոնք թեև մի շարք խնդիրներում չհասան Սրվանձտյանին, բայց հարստացրին ազգագրության գանձարանը նորանոր նյութերով:

1876-ին «Գրոց ու Բրոց»-ի սիրահարներն ընծա ստացան Գ. Սրվանձտյանից մի նոր ժողովածու՝ «Մանանայ» խորհրդավոր խորագրով, որը մոտ երկու և կես անգամ ա-

վելի մեծ ծավալ ուներ նախորդից: Ըստ ազգագրական տեսակետից մի նոր աստիճան էր ոչ միայն քանակի, այլև որակի առումով: Գրքը բաղկացած է մի քանի մասից. ա) «Հայրենեաց համն ու խոր», որտեղ զետեղել է ազգագրական նյութերի մեծ մասը, բ) «Հայրենեաց վէպք և զրույցք», ուր տեղավորված են հեքիաթներն ու առակները, գ) «Նրգք և նազք հայրենեաց», որտեղ տեղ են գտել ձեռագրերից քաղված միջնադարյան բանաստեղծների մի շարք բանաստեղծություններ, ապա աշխարհիկ ժողովրդական երգեր, այնուհետև հանրալիներ, դուրբանք, բժշկարան և այլն:

«Մանանայ»-ի երևալը հայ գրական աշխարհում առաջ բերեց մեծ աղմուկ հօգուտ հեղինակի «Գրոց ու Բրոց»-ի ընթերցողների, ինչպես և ժամանակի բանասերների հույսերն արդարացան այն իմաստով, որ Գ. Սրվանձտյանը, որպես ազգագրության հիմնադիր, իր այս նոր ղեկավար հարստացրեց մեր գրական՝ անդաստանը:

1877-ին բոլորովեց ռուս-տաճկական պատերազմը և տակնուվրա արավ արև-

մտահայերի թե նյութական և թե բարոյական աշխարհը: Բազմաթիվ գավառների հայերը նյութական ու բարոյական զրկանքների հետևանքով սկսեցին թողնել իրենց պապերի սրբազան երկիրը և գաղթել օտար աշխարհ: 1878-ին, Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ, երեք վարդապետ գործուղվեցին Հայկական աշխարհի խոռվահույզ գավառները, նրանց դժգոհության ատիթները, ինչպես նաև կարիքները տեղեկագրելու և տաճկական պետությանը ներկայացնելու նպատակով: Այդ վարդապետներից մեկը Գ. Սրվանձտյանն էր, իր ժո-



ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆԶՏՅԱՆ

ղովորդի նիստ ու կացին քաջատեղյակ մի անձնավորություն: Նրա վրա դրված էր մեծ ու քաղցր, բայց ծանր պարտականություն՝ կանխել հայոց գաղթը, ամոքել ժողովրդի վերավոր սիրտը:

Գ. Սրվանձտյանի այս ուղևորությունը տևեց երկու տարի՝ 1878—1880, որոշ ընդմիջումներով: Այդ երկարատև ուղևորության ընթացքում նա չի մացավ, ինչ բան ին սեփական անկողինն ու նորմալ կյանքը: Բայց այդ ժամանակամիջոցում նա շատ ավելի մոտիկից շփվեց ժողովրդի հետ, ավելի լավ ճանաչեց նրա հոգեկան կարողությունները: Ահա այս գործուղման արդյունքը եղավ նրա «Թորոս Աղբար» երկ-հատոր գիրքը, որի առաջին հատորը լույս տեսավ 1878-ին, ուղևորության արդյունք-ների ամփոփումից անմիջապես հետո, իսկ երկրորդ հատորը՝ 1884-ին:

«Թորոս Աղբար» իր միանգամայն լուրահատուկ բնույթով, ազգագրական նյութերի զրանցման տեսակետից մի քայլ հտ էր: Այստեղ նա պարտավոր էր նկարագրել ժողովրդի քաղաքական ու տնտեսական վիճակը:

Սակայն, այնուհանդերձ, Գ. Սրվանձտյանը այն ծանր օրերին էլ աչքաթող չարավ իր սիրած գործը և «Թորոս Աղբար»-ի բազմաթիվ էջերում ավելց մեծ ժողովրդի ազգային սովորությունների, ապրելակերպի, լեզվի, տարազի, զարդերի և այլ երեքվույթների ազգագրական նկարագրերը:

«Գրոց ու բրոց»-ի և «Մանանյա»-ի ազգագրական նյութերը մեծ մասամբ հեթանոսական կրոնի և ժողովրդական հավատալիքների գրառում էր, մինչդեռ «Թորոս Աղբար»-ում շոշափվում էին սոցիալական հարցերը:

«Թորոս Աղբար»-ից հետո Գ. Սրվանձտյանը երկար ժամանակ լուռ և լուռ դա ունեի իր պատճառները:

Նկեղեցական ու զանազան պաշտոնական հանձնարարությունները Սրվանձտյանին գրեթե մեկուսացրին իր սիրած ու փայլալույս աշխատանքից: Բազմաթիվ հավաքած ազգագրական նյութերը, ինչպես կտեսնենք քիչ հետո, նա կորցնում է:

80-ական թվականներին, Վանի հայտնի սովի ժամանակ Գ. Սրվանձտյանը դարձյալ տեղահան եղավ և ուղարկվեց Վան, խրիմյանի հետ ժողովուրդը վտանգից ազատելու նպատակով: Մոտ մեկ ու կես տարի տևեց այդ հոգեմաշ աշխատանքը, որի արդյունքը եղավ նրա վերջին խոսքն ու գործը՝ հեղափոխական «Համով—Հոտով»-ը: Սա լույս տե-

սավ 1884-ին «Թորոս Աղբար»-ի երկրորդ հատորի հետ միասին:

Այս գիրքը դարձյալ հեղինակի ցավատանջ ապավորությունների արգասիքն էր, որի մեջ ազգագրությունը թեև քիչ տեղ ունի, բայց վերին աստիճանի արժեքավոր է ֆոլկլորային տեսակետից:

Այստեղ տեղավորված ազգագրական նյութերն իրենց բնույթով նման են «Թորոս Աղբար»-ի նյութերին:

Ինչպես տեսնում ենք, հայ ազգագրության ամենակառկառուն դեմքը, խիստ զբաղված լինելով հասարակական գործերով, չկարողացավ սկսած գործը իր ցանկադած ձևով մինչև վերջն հասցնել:

Գ. Սրվանձտյանը որպես ազգագրագետ և բանահավաք եզակի դեմք է: Մեր ոչ մի ազգագրագետ իր կյանքում այնքան շատ ու նվիրված չի աշխատել, որքան Սրվանձտյանը: 20-ամյա հասակից սկսած նա, երիմյանի հետ թե թե տված թափառելով Հայաստանի մի ծայրից մյուսը, կատարել է հասարակական և գիտական մեծ ու արդյունավետ աշխատանք:

Ինքն իր աշխատանքի ծանրության մասին գրում է. «Մեր ազգին մեջ պաշտոնի կամ գործողության հատուկ սահման մի չկա, մանավանդ՝ եկեղեցականի համար: Չենք կարող մենք մասնավոր ասպարեզի մը մեջ հառաջանալ կամ հատկապես մշակել ճշուր մը, գործինակ այսօր քարոզիչ, վաղը ժողովու մը անդամ, օր մը հեղինակ, օր մը նվիրակ, օր մը դաստիարակ, քննիչ, առաջնորդ, խաղաղադար, ուղևոր, դատաւոր, վանահայր, տեղական վարչական ժողովի անդամ, և այլն և այլն, կարճ ըսելով, ես իսկ անցած եմ այդ ամենն, և շատ ևս անխորժ անցքեր, որ գործողի մը առջև կեննեն և ծանր դժվարություն կը պատճառեն գործելու կամ ընթանալու: Այո, իրեն եկեղեցիով և ազգի տան տղան և մշակ, այդի փորելու, քաղհանք ընելու, արտ ջրելու, փլած պատերը շարելու, խառնակ ճամբարները հարթելու, անպետ ըլլալը խտակելու, ցորեն հնձելու, ալյուր աղալու ծառայությանց մեջ գտնվեցա և տեղ տեղ ալ գլուխ կտրեցին, սիրտս ծակեցին» (Համով—Հոտով, Թիֆ., էջ Ա—Բ):

Եվ, չնայած այդ ամենին, նա, որպես հայրենի երկրի անխուշ մշակ, գտնում էր թույլներ ու ժամեր, ազգագրությամբ և ֆոլկլորային նյութերի գրառմամբ զբաղվելու համար:

«Անցածս ու գնացածս տեղերը, ուր բազմակողմանի և ներքին ու արտատաքին կնճռոտ խնդիրներ և ներքին

ու արտաքին դժվարություններ կզբաղեցնեն անձս ու միտքս, կը գտնեի տակավին ըրողներն ու ժամեր մտավոր վաստակոց և զբոսանաց, ժողովրդական բարուց և ավանդությանց, աղն ու մաղը, խաղն ու տաղըն, հողն ու ջուրը կիրքն ու գիրքը խառնելու» (նույն տեղ, էջ Գ.):

Քաջալեզվելով ունեցնողներին ու իր բարեկամների խրախուսանքներից, Սըրվանձտյանը ոչ միայն գրի էր առնում հայ ազգագրական ու ֆոլկլորային նյութերը, այլ և իր շուրջին էր հավաքել գեղեցիկում ապրող բազմաթիվ գրագետ և ֆոլկլոր սիրող անձնավորություններին:

Ցավոք սրտի պիտի ասել, որ Սըրվանձտյանի գրի առած և ուրիշների ձեռքով հավաքած հսկայական հում նյութերը այժմ չկան:

Ազգագրի մեծ եղբոր դուստրը՝ Անթառամ Սըրվանձտյանը, որ այժմ ապրում է Երևանում, պատմում է, թե Վանում, հայ-թուրքական մի միջադեպի ժամանակ, երբ Գ. Սըրվանձտյանը գտնվում էր տնից դուրս, թուրքերն սկսեցին խուզարկել գրագետ հայերի տները և մասսայաբար բանտարկել նրանց: Գարեգնի կրտսեր եղբայրը՝ Սիմոն Սըրվանձտյանը երկուսը կրելով ընտանիքի անդամներին բանտ նետելուց թոնիրն է լցնում և փրակին հանձնում Գարեգնի ամբողջ վաստակը:

«Իմ շրջուն վիճակս շատ զրկանքների պատճառած է ինձ, և թղթերու կորուստ», գրում է Գ. Սըրվանձտյանը 1884-ին «Համով—Հոտով»-ում (էջ Ե.):

Մի այլ տեղում գրում է. «Դեռ ունիմ բաներ պարկ ու պուճախը մնացած, որքան թափաքիած և կորած լինեն այս հընդամյա թափառելուս և տեղ տեղ պաշտոնի պաշտոն զբաղվելովս» (ն. տ. էջ 82):

Չնայած իր զբաղվածությանը և տաճկական պետության ու գավառական պաշտոնյաների անլուր հալածանքներին, Գարեգին Սըրվանձտյանն իր հավաքած նյութերը կարողանում է մի կերպ տպագրել: Նա այն կարգի ազգագրիներից ու բանահավաքներից էր, որ օժտված էր այդ գործի համար անհրաժեշտ բնատուր տաղանդով: Այդ է պատճառը, որ նա իր միտքն ու ժամանակն զբաղեցնող առարկային թեև ժլատ, բայց օտեր ու դիտակամ արժեքավորում է տվել: Ազգագրության մասին նրա արած դիտողություններն ու կոահուսները, ինչպես և հայացքներն այնքան մոտիկ էին ճշմարտության, որ մինչև այսօր էլ նրան հետևողները կրկնում են այն:

Դատելով տպագրած նյութերի բովանդակությունից Գ. Սըրվանձտյանը ստակ հավաքողի կամ սիրողի դերում չէր գտնվում: Նա ուներ բանասերների հատուկ, լուրջ հոտառություն, որի շնորհիվ գրի առած ու տպագրած նյութերի մեջ չենք գտնում «անպետք» կամ «երկրորդական» բաներ:

«Մանանայ»-ի առաջաբանում նա գրում է.

«Մանանայ»-ս կմատուցանեմ հայ բանասիրաց ոչ իբրև Սինա անապատին երկնատեղաց նվիրական հաց, այլ իբրև Հայաստանի գազպին, որ երկրի ծաղկանց հյութեղեն օդին մեջ կը գոյանա, ցողով այգույն կը շաղախի, արեւվուն ջերմիկ ճառագայթներն կը դանգի, կը հասունանա, և շաքարախմորի և մեղրի համով իբրև դինդ հակինթ կամ հատ հատ մարգարիտ կիջնա մաքառներու, տերևոց, գաղի փշոց և մատուռակի ոստոց վրա ի դույն արծաթափայլ, և ի ձև նուան հատի...»

(էջ 5): Դժգոհություն հայտնելով ազգագրական նյութերը գրի առնելու կարևորությունը չըմբռնող, իր ժամանակի կատարյալ տգետ մարդկանց նկատմամբ Սըրվանձտյանն ավելացնում էր.

«Վատահ եմ թե պիտի գտնվեն ոմանք ոչ միայն նյութուն նկատմամբ, այլև պիտի գտնվին, որ ճանչան, թե այսպիսի գործ մը պատրաստել և ի լույս ածել ավելի վաստակ վառթե գրասիրի մը, քանի ի նորո բան մը հեղինակել» (ն. տ. էջ 6):

19-րդ դարում Եվրոպայում արդեն ծայր էին առել ազգագրությունն ուսումնասիրելու բայց ամենից առաջ հում մատերիալը գրի առնելու կարևոր աշխատանքները: Մի կողմից հավաքվում, և մյուս կողմից ուսումնասիրվում էին նշանավոր գիտնականների կողմից: Այդ աշխատանքների ծավալման հետևանքով բացահայտվում էին ժողովուրդների արևոր հնության գաղտնիքները: Գիտությունն ազգագրական նյութերի հիման վրա միայն թափանցում էր մարդկային հասարակության սոցիալական կյանքի խորքերը և կատարում պրպտումների:

Հայ մեծ բանահավաքը հետևելով գիտական այդ մեթոդին սկսեց հավաքել մեր ժողովրդի ազգային սովորությունները, թերևս առանց տառամնասիրման ու հանձնել ապագային: Նա արդեն հասել էր այն եղրակացության, որ կրոնական հավատալիքներն ու առասպելները ծագումն առնելով մարդու մտածողության ստորին աստիճանում, իրենցից ներկայացնում են նրա մարդու կյանքի, ինչպես և կրոնի պատմու-

թյան սաղմերը: Այդ կրոնական հավատալիքներն ու առասպելները համարելով մարդկային հասարակության մտածողության մի որոշ շրջանի պատմությունն ու կոլտուրան, Սրվանձտյանը գրում էր.

«Այսօր այն ամեն բաները, որ մեր մեջ կամ գիտությունն ու կրթությունն ունեցող ազգաց առջև կը համարվեն առասպել, կը համարվեն նախապաշարումն, կը համարվին մութ ու խավար, ի Հնդկիս և ի Չինս իրականություն է, կենցաղագիտություն է, բարեպաշտություն է, լուսավորություն է» (Ման. էջ 135):

Կար և ժամանակ, երբ մարդն իրենից բարձր, իրենից կարող ու զորեղ էր պատկերացնում մեռած բնությունը և նրա ահեղ երևույթները, կենդանացնում էր անշունչ առարկաները և նրանց մեջ տեսնում ահավոր, բայց աներևույթ ոգիներ: Այդ են վկայում Ուրիպոսում, Բաբելոնում և այլուր կերտված և մեզ հասած բազմազան հուշարձանները: Այդ տեսանկյունից էր դիտում մեր ազգագիրը հայկական առասպելները ու հեթանոսական կրոնը:

Մինչև Գ. Սրվանձտյանը հայ ազգագրությունն, ինչպես տեսանք, անմխիթար վիճակումն էր: Թերևս ազգագրություն տերմինը այդ շրջանի համար լիապես չէր արդարացնում իրեն, որովհետև այն ժամանակ եթե հավաքագրվում էին ազգային սովորությունները, ապա այդ կատարվում էր սոսկ ազգագրական պայքարին և հայ ժողովրդի հավաքական ուժի մոբիլիզացման ու ինքնաճանաչման նպատակով: Մեր իրականությունն այն ժամանակ ազգագրությունը հասկանալու և այն ուսումնասիրելու հիմքեր էլ չունեի:

Ծիշտ ըմբռնելով ազգագրության դերն ու նշանակությունը ազգային պատմության հնագույն էտապների ուսումնասիրման գործում, Գ. Սրվանձտյանը հայ ազգագրությունը իր սահմանափակ ու տկար շրջանակներից դուրս բերելով բարձրացրեց մի նոր գիտական աստիճանի վրա: Նրան հետևեցին Արիստակես Տեկանցը, Կ. Նաթանյանը, Միրախորյանը, Ս. Հայկունին և ուրիշները: Պատահական չպետք է համարել, որ մեր ազգագիրը իր ազգագրական գործունեության ընթացքում առավելագույն չափով զնահատում էր և ժողովրդի հեթանոսական հավատալիքների ու առասպելների գիրապրակները մեր ժողովրդի միջից: Նա հասկանում էր, որ ժողովուրդների հիշողության մեջ ապրող նախնական մտածողության այդ եղանակներն են հանդի-

սանալու այն հուսալի բանալիները, որոնցով պիտի բացվեն այդ ժողովուրդների ծագման, աճման ու զարգացման մասին հոգացող գիտությունների դռները: Նրան հայտնի էր, որ նվիրպալում հնագիտությունն ու ազգագրությունը մի կողմից, լեզվաբանությունը մյուս կողմից մեծ հայտնագործություններ են անում, որ այդ հայտնագործությունների ամենամեծ և անսպառ աղբյուրը ժողովուրդն է միայն, ուստի և նա բարձր է գնահատում ժողովրդի և նրա բանավոր ստեղծագործությունը, որովհետև

«Ժողովրդյան միտքն ու բանականությունը չէր կարելի մնալ անգործ և անզգա, նա իր տեւած, ըրած ու լսած անցքերը կը խոսեր բերանացի, կը շարադրեր, կվիպասաներ բանացի, և իր զգացած սերն ու թախիժ կերգեր, կը մրմնջար թե հանձին առանձին և թե հրկեհրության, անշուշտ երևակայությունն այ բան մը կը հավելուր բուն եղածին վրա, բան մ'ալ լսողը կը հավելուր երգիչ ինքն ևս այլում կը հաղորդեր» (Ման. 148):

Գ. Սրվանձտյանը հայ ազգագրության նշանակությունը տեսնում էր նաև այն դերի մեջ, որ հայ ազգագրությունը պիտի ունենար մեր գրականության հետագա վերելքի մեջ:

Սրվանձտյանը շատ թանկ էր գնահատում հայ լեզուն և առաջադրում նրա ուսումնասիրման հրատապ հարցը: Իր ստեղծագործություններից շատերի մեջ է նա անդրադարձել այդ հարցերին, գտնելով որ առանց գավառն ու գավառային լեզուն հասկանալու և ուսումնասիրելու անկարելի է հասկանալ ազգային պատմությունը:

Մեծ է Գ. Սրվանձտյանի ծառայությունը հայ ազգագրության բնագավառում:

Ինչպես իր ժամանակին մեծ բանասեր Ալիշանը, նմանապես և մեր օրերի հայ ֆոլկլորի հսկա Մ. Աբեղյանը, իրենց խոշոր գիտական աշխատություններում, երբ խոսքը վերաբերվել է ազգային սովորություններին, հավատալիքներին ու առասպելներին, հենվել են Սրվանձտյանի գրի առած նյութերի վրա:

Հանձին Գ. Սրվանձտյանի «Գրոց ու Բրոց»-ի և «Մանանայ»-ի հայ ազգագրության փանծարանն ունի դեռևս չգերազանցված աղբյուրներ, որոնց լուրջ ու մանրազնին ուսումնասիրությունը մեր բանասիրության հետագա ամենաուսույուն գործերից է լինելու: